

ՀԱՆԴԷՍ՝ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՄԱՆՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ, Ա. հտր., Պատասխանատու խմբագիր՝ ԱԻԵՏԻՍ Գ. ՍԱՆՃԵԱՆ, Լոս Անճեյրս, Գալիֆորնիա, 1984 (220 էջ) :

Օտարալեզու հայագիտական մամուլի ընտանիքը կը բաղմանայ նոր անդամով մը : Արդարեւ՝ «Revue Des Etudes Arméniennes»-ի, «The Armenian Review»-ի եւ «Annal Of Armenian Linguistics»-ի կու գայ միանալու նոր անուն մը՝ «Journal Of Society For Armenian Studies», ինչ որ կը հաւաստէ թէ արեւմտեան կողմն աշխարհին՝ բայց մանաւանդ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ, վերջին տասնամեակներու ընթացքին հող գտած ու զարգացող հայագիտութիւնը կենսունակութեան նոր ապացոյցներ կու տայ :

«Հանդէս»ը սեփականութիւնն է Հայագիտական Ուսմանց Ընկերակցութեան, որ 1974 թ.ին հիմնուած էր՝ Գալիֆորնիա (Լոս Անճեյրս), Հարվըրտ (Պոսթըն) եւ Գոլուժպիա (Նիւ Եորք) համալսարաններու մէջ պաշտօնավարող խումբ մը գիտնականներու կողմէ, հայագիտութեան տարբեր բնագաւառներու սերտողութեան եւ ուսումնասիրութեան մղում տալու նպատակով : Գիտական այլ ընկերակցութիւններու («Մերձաւոր Արեւելքի Ուսմանց Ընկերակցութիւն», «Ամերիկեան Պատմագիտական Ընկերակցութիւն», «Սլաւոնական Ուսմանց Զարգացման Ազգային Ընկերակցութիւն») հետ ստեղծած իր համագործակցութեանն անկախ, ինչպէս եւ իր կազմակերպած գիտական

համագումարներուն եւ ասուլիսներուն զուգահէտ, Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը 1976 թ.ին կը սկսի հրատարակել հայագիտական «Լրատու»ն (տարեկան երեք թիւ), իսկ աւելի ուշ՝ «Տարեկան Մատենագիտութիւն Հայագիտական Ուսմանց»ը, որուն նպատակն է հայ եւ ոչ-հայ հանդէսներու մէջ լոյս տեսած հայագիտական յօդուածներուն (բացի լեզուագիտականէ) մատենագիտութեան հրատարակումը: Եւ այժմ՝ «Հանդէս»ը, որ ցարդ Ընկերակցութեան կողմէ հետապնդուած եւ իրականացած հրատարակչական ամենէն յանդուգն ծրագիրը կրնայ նկատուիլ: Առ այժմս՝ «Հանդէս»ը լոյս պիտի տեսնէ տարին մէկ համար: Լեզուն՝ միայն անգլերէն է:

«Հանդէս»ը իր ներքին երկու բաժանումներով յատկացուած է հեղինակային ինքնագիր ուսումնասիրութիւններու, եւ հայագիտական գիրքերու նուիրուած գրախօսականներու:

Ուսումնասիրութիւններէն (թիւով տասներկու) ոմանք ստորագրուած են հայագիտական աշխարհի շատ ծանօթ անուններու կողմէ. Բարկէն Առաքելեան («Հնագիտական Պեղումները Սովետական Հայաստանի Մէջ»), Ճոն Կրեփին («Վաղ Շրջանի Յոյն Պատմագրութեան Բեկորներ՝ Հայկական Նիւթերու Առընչուող»), Միքայէլ Սթոն («Նախահայրերու Պատմութիւնը, Աղամ եւ Իր Չաւակներն ու Թոռները»), Ռոպըրթ Հիւսըն («Արծրունի Սեֆեաիւսեան Տունը—Իշխանական Հարստութեան Մը Գոյատեւումը Եկեղեցական Դիմակի Տակ»): Ուշագրաւ եւ հետաքրքրական են Ռոպըրթ Էտուրտսի «Եիւան Գալէսիի Հաւանական Թուականի Մասին» եւ Մ. Շահինի «Հայաստանի Մէկ Քանի Առասպելական Թագաւորներու Մասին—Կարելի՞ է Չանոնք Առընչել Վաւերական Պատմութեան» յօդուածները:

Գրախօսականներու բաժինը (խմբագիր՝ Ռիչարտ Յովհաննիսեան) կը հաշուէ տասնեօթը գիրքեր: Գրախօսողներու մէջ՝ Ռոպըրթ Թոմսըն, Գրիգոր Մագսուտեան, Ռիչարտ Յովհաննիսեան եւ Ռոնալտ Սիւնի: Ճիշդ է որ իւրաքանչիւր գրախօսող ունի իր նախասիրած ոճն ու եղանակը գիրք մը մատուցանելու, սակայն ուշագրաւը այստեղ՝ վերջին տարիներուն անգլերէն լեզուով լոյս տեսած հայագիտական մենագրութիւններու քանակն է, որ զուրկ չէ որակէ, ինչպէս կը վկայեն գրախօսականները:

Պատուաբեր, շահեկան ու շնորհակալ հրատարակութիւն մը, որուն համար արժէ շնորհաւորել Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը, եւ բոլոր անոնք, որոնք իրենց գիտական, բարոյական ու նիւթական (Հ. Բ. Ը. Մ.ի Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամ) աջակցութեամբ սատարած են գործին իրականացման:

Շնորհաւորելի սկիզբ մը, որուն կը մաղթենք առոյգ ու երկարատեւ կեանք:

ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ